

ԽԱՐԿԱԿ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շարաթ, ՅՈՒՆԻՍԻ 11-ին. Թիֆլիս. №24.

Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ Թ Ո Ւ Ր Ք Ե Ր Ի Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը




Բայ հոյ... դրութիւն ստեղծեցինք էլք...
Բանութեան չեն գիտանում, սահմանադրութիւնն էլ չեն հաւանում Ամենքն էլ անկախութիւն են ու-
րում ու իրենց մուգիկը չաղում:

Я.Т.С.БЫХОВА

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի ԲԱԺՆԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Տարեկան 5 ռ.
 Կէս տարին 3 »
 Երեք ամիսը 1 » 50 կ.
 Ամիսը — 50 »
 Թիֆլիսում տարեկան 4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՉԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան 12 ռ.
 Կէս տարին 6 »
 Երեք ամիսը 3 » 50 կ.
 Մէկ ամիսը 1 » 20 »

100 արով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձրի կարգացողներին պէտք է նկարենք գլխիվայր:

VI **ՄԱԹԱԲԱԼԱ** **VI**
 Տարի Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի
 ԼՈՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ քեր բոլոր բնագիծների համար

«ԽԱԹԱԲԱԼԱ» շաբաթի ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ սքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆիդ ուզի: Հասցէն՝ Тифлиси Музейный пер., редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
 Ժամանակաւոր խմբագիր՝ Ս. Մուրայաճեան

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՑՅՈՒՆ

1911 ՅՈՒՆԻՍ 30 օր
 Տօն ս. Գրիգոր Լուսավորչին մեր տարեկանի վերաբերյալ: Տօն ս. Գրիգոր Լուսավորչին մեր տարեկանի վերաբերյալ: Տօն ս. Գրիգոր Լուսավորչին մեր տարեկանի վերաբերյալ: Տօն ս. Գրիգոր Լուսավորչին մեր տարեկանի վերաբերյալ:

Суббота **ՉԱՐԱԹ** Դեպքում 28

ԱՅՍՕՐ՝ ԱՅՍՕՐ Է

„Խաբարայի“

Հ Ի Ն Գ Ա Մ Ե Ա Կ Ի
Տ Ա Ր Ե Գ Ա Ր Զ Ն Է


Տարեդարձային ճաշին մենք քէֆ ենք անելու եւ կենացն ենք խմելու՝ մեր բոլոր անցեալ եւ ներկայ մեռած եւ կենդանի բաժանորդների, ընթերցողների, աշխատակիցների եւ նիւթ տուող ազգային գործիչ-փրկիչների:

ԽԱԹԱԲԱԼԱՆ ՎՈՒՆՑ ԷԼԱՐ

Էրէզ չէ մէկէլ օրն էր...
 Իս միք տանն էի:
 Դուք էլ ձիր տանը - կուլէիք հարբաթառ:
 Մի ձէն, աղմուկ, շփոթ նընգաւ ահանջիս:
 Տեղիցս ժաժ չեկայ:
 Ասի՛ էստի իմ, ի՞նչ կանայ ըլի, ասի:
 Ձէնիրը ուփրօ աւելցան.
 Հայ, հո՛ւյ— ուռն, հի հո՛ւ... խաթա է էլի, վայ վայ:
 Ձէներ է լսում. իս էլ լսում իմ, փուղ խոմ չիմ տալի:

(Ձեզանից քանիսն է փուղ տալի, միգ վուր լսում է):
 Հա, էն էի ասում.
 Ձէնիրը ուփրօ ու ուփրօ լսում էին, աղմուկում էին:
 (Դուզիմ վուր մի քիչ էլ պօէտուրի գրիմ, բանաստեղծ հոշակիմ):
 —Վայ, վայ, հի, հի հէյ-հայ ուռն, ուռն: Լսում էր ձէնը...
 Կնոջս ասի՛
 —Ա. կնիկ, ասի, դուսը ի՞նչ խաբար է, մէ իմացի, ասի, է:
 —Ի քու աչքն էլ տրաքի, կօտէ, ի՞նչ խաբար պիտի ըլի, կօտէ:
 —Վայ, ասի, իս մարթօ չիմ, ասի, տբա իմացի ու ասն, ասի, գուզիմ իմանայ ասի:
 —Հարփանները կուլին, կօտէ:
 —Վայ, հարփանները էգ թաւսը ձէն չին հանում, ասի, նրանք ուրիշ տեսակ ին բղաւում-ճղաւում, ասի. էստի մէ նուր բան պիտի ըլի. ասի:
 —Ի քու գլուխը չունիմ, կօտէ, գուզիս իմանայ՝ դուս գնայ ու իմացի կօտէ:
 —Ֆիէ, ասի, մինք վուր փսակում էինք, դուն չէիք, վուր ժամումը, ասի, տէրտէրի հարցին ջուղաբ տւիր թէ՛ նրամանը իս, ննազանդ իմ. մաշ ի՞նչի ինձ հնազանդ չիս ասի. իս գուզիմ վուր դուն իմանաս թէ՛ էգ ի՞նչ է ըլում, ասի:

12 (կիր.) Չայտօր արարի փոշտաւ յղեցնից ցախաւել մեծ՝ վասն մաքրելոյ գմբէանի բացելոյ քաղաքային ուղարակայի:
 13 (բ. 2.) Տօն սրբոյն Մանգինեանի Սեղբաբայ, որ ում ետիցն բունեցէ, վայն եկել է նրան տարել, մինչև որ իր մանկավարժական մեթոդն չցուցանեցէ, ազատ ոչ արձակեցէ:
 14 (գ. 2.) Յիշատակ պապին Նիկողայոսեան Մամբրահամու, որ սրպէս ծուրբելա, որքան բօյն բարձրացուցանէ, այնքան գաստիճանն ջերմութեան իւրոյ ի մէջ ժողովոց հասուցանէ եռացման աստիճանին:
 15 (դ. 2.) Պահք: Ով այս օրն պաս ոչ պահեցի, խնդրեմ յԱրարչէն, զի ի մէջ կէս գիշերին Թառա Սեղրակեանի ճանկն ընկեցի:
 16 (ե. 2.) Ամսեղարձ ժամանման պրօֆէսօրին Սիվերսայ, որ սրպէս լսեմք, եկաւ սովորեցնելու, բայց ինքն սովորեց ուղարակայի հաշւապահներից միթոնական, չինական, քրդական և ասորական կրկնակի և անկրկին հաշւապահութիւնն:
 17 (ուրբ.) Այսօրանից օրերն կէս արշին երկարեցին. ամարանոցականներն նւխայ-ով երթայցեն և սեֆ-ով վերադարցեն:
 Ատողազէս—տօմարազէս և օրացոյցազէս
Փարեմուզ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՍԱՍ

—Իս էլ քիզ ասում իմ, վուր էլ հնազանդ չիմ, կօւէ, կուզիս կօնցլիստորին թուղթ տու, կօւէ, գուզիս, ինքզ վիկաց ու քոշիքզ հաքի, գնայ գուսը ամեն բան կու իմանաս, կօւէ:

Ձենիրը էլի լուում էին. ասի, լաւ կանխմ, ասի, վուր փողոց դուս գնամ, կուլի փաթեռակ բան ըլի, ասի, ուփքօ լաւ է կրիշա բանցրանամ, կրիշիցը մտիկ տամ, աշխարքի խերն ու շառը իմանամ, ասի:

Բանցրացայ:
Ձենիրը ուփքօ շատ էին լուում:
Կարմիր-կարմիր կտորտանք էլ էրեւում էին:

Փէտերի ծէրին կապած:
Բալկոններիցը քաշած:
Չլի, ասի, էստի մի բան կայ, ասի, կարմիր մահուղը, չիթն ու միտկալը իժանացիլ է, ասի:

Ինձ ու ինձ փիքը էի անում:
Կուլի վուր քարանսլի պրիկաշչիկները, ապրանք սաղացնելու համա ին հարայ հրոց բանցրացնում:

Կուլի վուր Սօնթքարը, Շահը ան թէ չէ էմիրը գալիս է, ասի, ու գուզին վուր կարմիր կտորներ շանց տան:

Ախար մօզա է է:
Մինձ մարթիք վուր գալիս ին, բալկօններեմէն խալիչէք ին դուս փոում:
Քուչէքն էլ շրում ին, ցեխ անում:
Սամ մարթը, մինձ մարթը՝ կու գիգենայ, թէ էս քաղքումը, մարթիքը փեթխումներ ին, չունքի, ինչ ունին չունին՝ բալկօններում ին դուս բերած ըլում:

Բզաւեցի կնոջս՝ ձէն տւի կրիշիցը:
—Ս. կնիկ, կարմիր միգար վուր ունինք, բեր, ասի, էստի:
—Ի՛նչ բու աչքն էլ կարիմ, կօւէ, հիմի էտիզ իմ բանցրանում, կօւէ:

—Դու ժամումը, տէրտէրին չասիր, ասի, թէ ինձ հնազանդ պտիս ըլի, ասի:

—Հնա, կօւէ, գուզիս կօնցլիստուր գնայ, կօւէ:

Ասի. գնամ, ասի՝ չգնամ, ասի՝ գնամ, ասի՝ չգնամ, ու Չգրած գիվիր էկայ կրիշիցը, դուս էկայ փողոց. ասի գրնամ ասի, ու ճամփէս բռնեցի. Գոլովինցկով վուր գնում էի, տեհնիմ ինչ տեհնիմ:

Կօսիս թէ էրէզ էր:
Մնամ վուր էրէզ է:
Հեստի մինձ խալիս էր հաւաքելի, կօ-

սիս, հարուստ մեռիլի թաղում ըլէր:
Չլի ասի՝ իս մեռիլ իմ ու իմ թաղման վրէն ին հաւաքւած, ասի, էս խալիսը: Նորից տուն վագեցի, տեհայ վուր կնիկս բալկօնում նստած է, գուլին էլ ծածկել է:

—Ս. կնիկ, ասի, շուտ, խալիս է հաւաքելի քուչէքումը, էնդգամ խալիս, կօսիս մի մինձ ու հարուստ մարթու թաղում ըլի. ասի:

—Քեզից հարուստ ու մինձ մարթ էլ ո՞վ կուլի, կօւէ:

—Հնա իս էլ էս իմ ասում, ասի, է՛ իս խօմ չիմ մեռի, ասի, վուր...

—Մնամ վուր չիս մեռի, կօւէ, մնամ թէ կինթանի իս, կօւէ:

Կընգամէս վուր իմացայ, թէ Չէր չիմ մեռի, գնացի՝ գուլիս էլ մի քիչ պատերին տւի, ասի, փորձինք, էգէբա իրագում իմ ու գուրթ կի մեռիլ իմ:

Տեհայ վուր գուլիս պատի մեռին զիպչելով կոտորելի էր, արին էր դուս գալի:

—Չէ, չիմ մեռի, գլխիցս արին, կարմիր արին է դուս գալի, ասի. վուր մեռած ըլէի՝ Չուր, սալտակ Չուր կու գուս գէր, ասի:

Նոր մէկանց Գոլովինցկի վագեցի:
Տեհնիմ իմ ճանանչները զիփ էնգի էին:

Վնա, կօսիս թէ էրէզ է:
Մնամ վուր էրէզ էր:

—Էս ինչ խաբար է, Գասպար, մէ աթմորթին հարց աւեց ինձ:

—Բէխաբար իմ ասի:

—Բէխաբար իս, կօւէ, վունց թէ բէխաբար իս, մաշ էստի ինչ իս շինում, կօւէ:

—Սալին էկել է, դուս էլ էկիլ իս, իս էլ էկիլ իմ, ասի:

—Բէխաբար իս, կօւէ. բէխաբար իս, բէխաբար իս...

—Վնա, խաթաբալա է, ասի:

—Սաթաբալան դուն իս, կօւէ:
Մէկէլներն էլ ձէն տւին՝

—Սաթաբալա, խաթաբալա, կօւէ:

Իս խիթի վրէն չէի,—ախպէր, ինչի պտիմ խաթաբալա ըլիմ ասի. էկայ տուն կնոջս հարցրի:

—Իս խաթաբալա իմ, ասի:

—Սաթաբալա իս, բա ինչ իս, ասմէ: Վնամէ ասի, բաս բուրթ է բանս, ասի. էլի Գոլովինցկի ներքիւ վագեցի, տեհնիմ կարմիր բայրադներ, կարմիր խալիչանիր, սուփրէք, կտորներ. գլխիցս

էլ կարմիր արինը էլի կամաց-կամաց:

Չլիւ ձլիւ,
Կօսիս թէ էրէզ էր.

Մնամ վուր էրէզ էր.
Էրէզ չէ՞ր վեց տարի աղաք էր,
Հա էն էի ասում:

—Ինչ խաբար է ասի:

—Հիմի ազատութիւն է, կօւէ:

—Վունց թէ ազատութիւն է, ասի:

—Հիմա, ինչ վուր գուզիս՝ կանաս անի, կօւէ:

—Սուանց կնոջս հրամանքի, գոլարից մուրաբէք կանամ հանի, ասի:

—Էս մնամ վուր չիս կանայ, կօւէ, ու էստուր էզը ինչ գուզիս կանաս անի, կօւէ, ում վրէն գուզիս գրի, ում վրէն գուզիս նիւշի, գուզիս էշի վրայ նստեցրու, գուզիս մայմուն շինի:

—Վնա, էս լաւ բան է, ասի:

—Ի՞նչ թէ լաւ բան է, իստակ խաթաբալա է, կօւէ:

Կօսիս թէ էզ էրէզ էր.
Մնամ... վուր էրէզ էր,
Չէյ գիդի հնա, ինչ լաւ էր է.

Դիփ կարմիրներ, զիփ սևեր...
Մնամ վուր էրէզ էր:

Սօսքերն էլ վուր կարմիր էին:

Ասի խաթաբալա իմ ու խաթաբալա, արի, ասի «Սաթաբալան» կարմիր փեշտիլ տամ, ում վրայ ինչ կու սագի՝ էն գրիմ ասի ու արի:

Արի ու անում իմ:
Էն օրւանից էսօր հինգ տարի է անցի:

Վայէնի պոլոժէնի ա:
Պարտիէքի մոլոժէնի ա:

Դիփ կայ, մինք էլ կանք:
Էլի կու մնանք:

Կայ ու կու ըլինք:
Վայէնի պոլոժէնի վուխար մէ տարին իրիք տարով ին հեսաբ անում:


Պարտիէքի մոլոժէնի վուխարն պտի մէ տարին վեց տարի հեսաբ անին:

Չուրս տարին ձեզ փիշքի:
Իտոգումը, հինգ տարին վուր հեսաբ անինք, ինչ կու կորցնինք:

Մնա, էս օր մինք կանամք, ասի, վուր մինք խաթաբալա ինք քսանուհինգ տարի, հինգ տարին՝ հինգ Չէր աւեցրիլ իմ:

Դուք հէնց կու գիդենաք թէ օրեւանի միգէզով ինք անում:

Չինք ուզում միգ համա օրէլ սարքիք, վուր իժում դէյնի թաւուր ման ամէք, տուտուց տուտուց դուս տաք ու մինք էլ լսինք:



შერეული ყმაფორქაძეების ყაბაღდაღები, որბე იქნა ხა დაათვიღი ანგასონი, დაათვი-
გონი ხა ხერქაფი ხ ღებათარგნი თუჯათონი...



Չէ:
Մինք էդ թաւուր խաւաթ չունինք:
Մինք ասում ինք:
Մէ տարին հինգ տարի:
Հինգ տարին քսանուհինգ տարի:
Խաթաբալէն զակոնով կինք ունէ,
քսանուհինգ տար:
Մեր ընթերցողներն էլ կինք ունին
քսանուհինգ տարին:
Ու գուզիմ վուր էլի հինգ հարիւր
տարի ապրինք միասին, մէտիղ ջան
ասինք, ջան լսինք. մէկ ասինք հինգ
լսինք:
Այ խաթաբալէն վունց էլա:
Կօսիս էրէզ էր:
Մնամ էրէզ էր...

Գասպար Կալասուզով
 Խաթաբալաւ ամենայն հասուց

Ա Յ Ր Ի Ն

(Քառեկամուհուս՝ Լիա Գ...ի յիշատակին)

Իր մունջ տատապած սիրահար հոգին,
 Ու շրիծը թարս...
 Որ չեն մոռանալ միայն հողն ու գով,
 Մինը՝ իր շաշով, միւսը՝ ծաղկունքով:
 Կանգնած գետափին, ես մեն ու սգուր
 Յառել էի պուշ բիքս շեշտակի
 Այն նազ շողող լոյսին մենաար
 Ծղծիմ տնակի —
 Ուր գուցէ արդէն հանգչում էր խորին
 Յաւերժի քնով.— այն տանջւած այրին:
 Մարիկ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Փողրաս

Փողրաթով վերցնում ենք մեր հասարակական գործիչների յօրեկանները տօնելու: Ուստի իմ այս յայտարարութիւնով դիմում եմ մեր գործիչներին, որոնք ցանկանում են տօնել իրենց յօրեկանը, և խնդրում եմ վաղօրօք ցուցակագրել:

ԽԱԹԱԲԱԼԱՆ 5 ՏԱՐԵԿԱՆ

(Կենսագրական ակնարկ)

«Խաթաբալան» ծնւել է Թիֆլիսի Երեւանեան հրատարակում 1906 թ. յունիս ամսին: Նրա հայրը կարճ հաստ, բուխարի փափախով և երկար բեխերով մի մարդ է, որ դեռ չծնած սաստիկ սիրեց իր սուլային: Ամեն անգամ ճաշի ժամանակ երբ նրա հայր Գասպարը թինկը տւած էր լինում մութաբի վրայ, փոքրիկ և շարածճի նորամանուկը բարձրանում էր հօր վրան և բեխերը քաշելով միշտ ասում.—
 —Հայրիկ, ինձ երբ ես աշկերտ տալու կամ գործի գնելու:
 Հայրն էլ ամեն անգամ բարկանում էր և ասում.—
 —Ո՛րդի, քանի զահլա տանես, թամամ «Խաթաբալա» դարձար գլխիս էլի:
 Հէնց այդ օրից նորամանկան անունը ֆրաց Խաթաբալա:
 Որքան յիշում եմ մանկան մկրտութիւնը կատարեց ծնւելուց երկու շաբաթ առաջ, կնքահայրն էր նազըբար Շլինգը իսկ ջուր բերողը՝ ներկարար Գրինկակի:
 Իսկ Ռոտտէրն էլ կուժուշկա էր:
 Նորամանուկ «Խաթաբալան» երբ գործի մասին շատ զահլա տարաւ, հայրը մի օր հանաքուց լրագրներում յայտարարութիւն տւեց, թէ իմ օրինաւոր ժառանգ և անօրէն որդի «Խաթաբալան» ցանկանում է ծառայել հայ ժողովրդին տարեկան 5 բուլբի վճարով:
 Յայտարարութիւնը լոյս տեսնելուց յետո՛ւ

Յօրեկանները բաժանւած են հետեւեալ կարգով:
 1) Առաջնակարգ գործիչները կրտսանուն երեք հաս ցամաքած նախքէ՝ հորնը՝ մի հատ «պաշինկի» ընկած մեքենայ ցամաքած հարերը նորից փոքրիւ: մի հարբան և սոստակայ տւած մեքենագործ, որպէսզի մեքենան կարգի բերի. իսկ նախաճորին էլ մեքենան խելքի կըրերէ:
 2) Երկրորդ կարգի գործիչներին երեք հատ շախտաներ, որոնք օրական տալիս են հինգ վեղթօ նախք. և մէկ հատ փշուած ակներով արաբայ ծակ տակառով և խորեա ընկած էշով:
 3) Երրորդ կարգի դրողներին մէկ հատ Համագանի էշ, և երկու ջուլ խիարով բարձւած:
 Ճառերի, ճառախօսների, ուղերձների, ուղերձամատոյցների, ճառերի երբ խօսելու, ինչքան խօսելու, ինչ տօնով խօսելու մասին առանձին պայմաններ:
 Ճանկացողները կարող են գիմել հետեւեալ հասցէով՝
 Բալախանի Չաբբատեան գաւառի գիւղն Նաֆթա-շախթա:
 Խաթաբալիստ Խորէն ժամ-դր-Բիլլին

Գիշեր էր նորից. լուս էր Թիֆլիս
 Ենիջ ու խոնջանքից լոյսերն ամեն շէջ,
 Եւ միայն Բուռն էր աղմկում լայիս
 Ամալութեան մէջ.
 Եւ միայն սիրտս էր հեկեկում տխուր,
 Մի նուր կարօտով լլկւած ստաթուր:
 Կանգնած գետափին, ես մ'էն ու սգուր
 Յառել էի պուշ բիքս շեշտակի
 Այն նազ շողող լոյսին մէնաար
 Ծղծիմ տնակի
 Ուր հիւծում էր դեռ ցաւով դժարին
 Այն խորհրդաւոր, սիրելի այրին:
 Ա՛խ իմն էր մի օր նէ մանկան սիրով,
 Սակայն չար մարդիկ մեզ անջատեցին,
 Նետելով յոռի կեանքի ծոցը-ծով՝
 Թունաւորեցին...
 Բայց կայծը սիրոյ մնաց միշտ անշէջ,
 Մեր խեղճ սրտերի մոխիրներն մէջ:
 Ապա կոյս լանջով նէ ալքիացած
 Կեանք մտաւ նորից եւ ուզեց սպրել
 Ու նորից յիշել վաղեմի հանգած
 Անուշ երազներ...
 Բայց ներս կարօտ աչերում անյոյս,
 Մանգաղը մահու շողում էր անխուս:
 Երբեմն, ուժամափ աղօթում էր հեզ,
 Պաղ դողոյջ շուրթերն հպելով ճակտիս,
 Ու բողբոջում էր որ ստաջան պէս
 Գարուն չի գալիս,
 Էլ կեանք ու ծաղիկ բոյր չունին անանց,
 Որ հաւքերն ամեն չեցին անդարձ...
 Ին հեկեկում էր որ շուտով այլ կին
 Ինձ կրփաղարջէ ու ես կրմոնում

տոյ ոսկի հնգանոցներ էր, որ հաւաքւում էր Գասպարի մախորկի քիսայում:
 Ամենքն էլ ցանկանում էին տեսնել այդ «Խաթաբալին», որովհետեւ նրա հայր Գասպարը լրագրներում շատ էր գովում:
 Չեմ մոռանալ լուսաճողի Գասպարի (նեքրողութիւն, ուզում եմ ասել՝ անգամը կանչի Գասպարի) խրատները, որ տալիս էր իր տղային՝ առաջին անգամ գործի ուղարկելիս:
 «Ո՛րդի, ասում է—աշխարհս դժակ, տղէն դանակ, կտրի ու կի—դոշալ կաց, ոչ սբից չվախենաս, տեղն ընկած տեղը ծիծաղացբու էլ—լացացբու էլ, կծի էլ—համբուրի էլ: Դու այսուհետեւ օտարականի ցուպն ես, առնելու և շրջելու ես տնէ-տուն, գիւղէ-գիւղ, քաղաքէ-քաղաք, թշնամի շատ կըճարես, բայց բարեկամներդ էլ պակաս չեն լինի: Բաւական է քեզ Ղարսի Ղարայի Մարգարը, Տմբալի Սաշանը, Լիլիպուտը, Բագբի առամները թափած, քաթառ Գեօզալ Աղաբաջին և ուրիշները, նրանք քեզ օգնական կըլինեն»: Ահա այդպէս էր խրատում Գասպարը իր տղային:
 Խաթաբալան մի շատ պարմանալի բնաւորութեան տէր էր: Կըզնար, օրինակ, գիւղ կըթրխկացնէր որնէ գիւղացու տան դուռը և ձայն կըտար.—
 —Տանն է Ծիծաղախրանց Մաթոսը:
 —Տանն է, ո՛վ ես, հարցնում էր գիւղացու հարսը:
 —Գասպարի տղայ Խաթաբալան եմ:
 —Համեցէք, համեցէք, կանչում էր հարսը և խնդրում ամուսնուն—Սահակ ջան, Սա-

հակ Խաթարալան եկել է, շուտ արա, տուն կանչի:

Այնուհետև փոքրիկ Խաթարալային կր-բազմեցնէին քուրսու վրայ և նրա ասած խօսքերից փոքրները բռնած, շուր գռած՝ քուրսու չորս կողմը կը պտտէին:

Կամ թէ Խաթարալան կը գնար մի որևէ քաղաքացու գանգը կը քաշէր.

— Ո՞վ ես, կը հարցնէր ծառան:

— Ես եմ, Գասպարի աղայ Խաթարալան:

— Համեցէք, համեցէք աղջիկ-պարոնս աչ-քերը շուր կտրած քեզ էր սպասուում:

Եւ այս անգամ Խաթարալան քուրսու տեղ կը բռնէր լսք քսած լոմբօրնի սեղա-նի վրայ:

Անգաճը կանչի, Խաթարալայն բաղնուս մատանած ժամանակ միշտ ինձ ասում էր թէ «ճիշտ է ես գնում եմ թէ գիւղացուն և թէ քաղաքացուն ուրախացում, ծիծաղ-դեցնում, բայց նրանք չեն իմանում, որ փիս մարդու տուն գնալիս և՛ ծիծաղեցնում եմ և նրանց համար շիւղափլաւ կփում» Միև-նոյն ժամանակ էլ ինձ հաւատացնում էր, թէ հայկական կեանքը հում և անհամ շի-ւղափլաւ է, իրան պէս խաշոփելիներ են հարկաւոր, որ եփեն և մի համի բերեն:

Ահա այդ փոքրիկ Խաթարալան դեռ հինգ տարեկան է, ցանկանանք, որ նա գտնայ 25 տարեկան և զինուորագրութիւնը վերջացնելուց յետոյ պսակենք «Սուրհան-դակի» հետ և մուրազին հասցնենք:

Նրա ոսկու և արծաթի պսակների մասին հիմա չեմ խօսում, այդ մասին կը մտածենք հարսանիքի հետևեալ օրը:

Փարիմուզ



Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Մի՞թէ կը բնւի է...

* *

Մի ժամանակ, ազատ ու անփոյթ իմ ա-սանձնութեան մէջ, ես ապրում էի թռչու-նի նման: Կատարելապէս մենակ էի ու հո-գուս խօսակիցներ էին հանդիսանում—Ա-ստրիական օկարինսն և երգերիս բազմա-շարժար տետրը: Իմ պատկերազարդ սենեա-կին ես անւանում էի Եգէմ, իսկ ինձ հա-մարում էի մի Ալլամ, ոչ մի աւելորդ բան չունէի— և դեռ ոչ միայն Նա, այլ մի կա-տու անգամ չունէի: Ինչ որ աշխատում էի — որպէս մի սուրբ պարտականութիւն, ան-միջապէս ուտում էի, մնացած կոպէկներն էլ հաշմանգամ մուրացիկներին բաժանում ու հանգիստ սրտով նորից աշխատել ըսկը-սում, մեր հանգուցեալ թերթերից մէկի խմբագրութեան մէջ: Մեր խմբագիրը և

Բարի խորհուրդ աշխարհի բոլոր Ասարե-լեաններին

Անկեղծարար խորհուրդ ենք տալի աշ-խարհի բոլոր Ասարեիաններին, որ իրենց անունների միայն սկզբնատուրը երբէք չզրել, այլ ամբողջովին.

Հարց եւ պատասխան

Ինչու մարդիք ձեռքներին ձեռնոցներ են հագնում, իսկ երեսներին ոչ, չէ որ ե-րեսներին աւելի կարեւոր է:

— Որովհետև երեսի կաշին աւելի բիրտ է, քան ձեռքերինը, մանաւանդ այն մարդ-կանց, որոնք ձեռնոցներ են գործ ածում:

ՊԵՐՆԵՐԻ ՊԵՐՐՆԵՐԸ

ԽԵՐԸ ԲԱՆՍՆ ՏԵՆՆՈՂ ԻՄ ՀԱԼԱԼ

ԳԱՅԻ ԲԵՍՍՊՍՐ ՋԱՆ

Գիտի՞մուս վէր մըտքովդ կասիս թա րաջողիս հինչ փիս մարթ տիւս եկաւ վէր ասածը կըտարւմ չի, ես չէ՛ հինչ եա ման նի եկաւ, վէր կարւմ չի էս գեարիւն-քա ուղիքն մին գոււնին դեամը տայ, խըր-ըընիւրան ինձ հըսըցնի. դայի, քու աղիզ զլօխդ վկայ ա, վէչ էս ա, վէչ էն. արար ըշխարին էլ գիւմանա, վէր գեարիւնքը գեալիս ա էն պուճուր պուճուր հէյվան մըչէմներան սկսած չուրու մարթ ըրարա-ծի արիւն էլ ես ա գեալիս. քիւչիւմն ինի տա թա օթախնէրմ, խուտէրմ ինին թա վզղի տակին, տեսնմս վեր զինքները կը-րակին քցած տիւրիւրըն գեալիս. դայի, քու արենըմ ասըմ՝ այետմն ինղի փոխվալ, վէր իսկի ըսէլի չի. էն յղէ քինալիս էլ մարթ կարւմ չի նամուս զէյրաթ անի,

աշխատակիցներից շատերը, որոնք խիստ լաւ գիտէին իմ խելացի յիմարութիւնը (կամ յիմար խելացիութիւնը) այսինքն՝ սև օրւան համար մի քանի կոպէկ չխնայելու, միշտ կշտամբում էին ինձ կրկնելով — Սթափախ վերջապէս... մի՞թէ կարելի է...

* *

Այնուհետև ես սկսեցի քիչ-քիչ փոխել ընաւորութիւնս. շուտով վճռապէս հրաժեշտ տւի իմ սիրած անուշ-անուշ գինիներին, տապակած վառիկներին ըօկֆօր ու խա-ւեարին... բոլոր հրաշալի խորտիկներին և սկսայ փողերս խնայողութեան դրամարկղը լցնելով, ապրէլ օրական 3 կոպէկի ցամաք հացով, երբեմն էլ կիրակի օրերն ու սրբոց տօներին զարչինով թէյ կամ քԵԲԱՑ-էի խը-մում: Իրկից հարևաններս, նկատելով իմ այդ փոփոխութիւնը—այսինքն երիտասար-դութեանս հետ չյարմարող այդ անօրինակ ժխտութիւնը, շարունակ ամաչացնում էին ինձ ա սելով

գինքը իւրան հւաքի, ախըր ես էս պե-րիւնքառէլս դալամը հունց եօր օնիմ, գրիմ թա ըստարւան փսիւնկայցն յիմարում էլ խոխա ասիս թա ըրարայ մարթ իմ թա կնէկ ապրանք ասիս, թա հէյվան, մին խօսքալ վէրը դամազըղ մնաց, վէրը դըւըր, վէրը կեաղ սըւաւ, վէրը սրանեց, վէրը պլլորից, վէրն էլ կարից վէչ էդ կըրագուզ-նէրին դիմանայ, վէչնէրը մէկնէց էն գու-նիա ճընըպարվէց, մախաւ:

Պա իսկի իլաժա, ես կինի վէր սօրւան օրը բաջօղլիլի իրէսուն չօրք տարայ ուս-տաղութօնը թողած փօրը վէց-վէց ընէլիս, մըտքի դօնն ընկնի, ընիծի էն թեազա տիւս եկած հւէրին, վէր ըրկաթի ձուանքը ըծէս. ախըր վէր Աստուճ եօր օնիք բանդան եօր չի օնիլ վէր դամքէչ Պօղոսը դիւզնիւ-թիւնան նէստա խօխա ըրախաւ օղլուշադաւ վէնընէրը մէկնին էս ըշխարիին մնաս պա-րով ասիս:

Իայի՞, պա էն վախտը ասիլ չըբ թա դօրմի քէ Պօղոս կեօնն չաթտասըն մին տիւս եկ քինա մէր դօխտուր Մօսինովին պարադնալը մտի անկուճ տիւր մին տէս հինչըն խուտէս մէր կնանիքը. դայի, ըն-ցած տարնին քինացալի էդ հեաքիմին կօշ-տը վեազմըս փունիլի, լսա վէր պարադնովը մտի, տեսնամ, գալըմը քիչի փեչին ընկած բլանուն դաթին ծակաւը եշիմ տեսնամ, վէր Դարբանդի կնանոցը կէսը ըտտեղ ա. կասիմ՝ պահիվ վէ՛ հինչ անիմ հինչ չանիմ, մին քիւնջիւմ պըպըգեցի վէր անկուճ տի-նիմ հինչն խուտէս:

— Ախչի նարգիդ, Իվան Ներսէսիչը քեզ էլ ա ասալ վէր պէտմտ ապերացի անիլս:

— Հա, ասալս. ամմա վախըմըմ ապրի-ցիայից:

— Ախչի, մարթդ զլիս ա ընկալ:

— Վէղիմ մարթիս գլեօխը, հինչ ա գլիս ընկալ, վէր սա ընկի:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ, մի՞թէ կարելի է...

* *

Այդ գրկից հարևաններիցս մէկը—մի ծեր դէղի (այ գրողը խեղդէր նրան) որ պարա-պուճ էր մօցիքուլովմեսմը և ինձ անւա-նում էր «Չվիլօ Միկիչ» խորհուրդ էր տա-լիս ինձ ամուսնանալ մի ունետր աղջկայ հետ, նրա օժիտը պահել անսպասելի սև օրւան համար, իսկ աշխատանքս խժոնլ թագաւորի պէս... Օ՛ ուտել-խժոնըլ իրօք լաւ բան է, հոգիս վկայ, շատ լաւ բան է. այ հէնց այդ թագաւորները՝ որոնք վերին աստիճանի շատակեր են, ծնւում են ուտե-լու համար և ուտում են թագաւոր լինելու համար... ինչեկիցէ:

Սօսքս այն այլանդակ դէղիի մասին է, որ յաճախ ուշ գիշերով գալիս էր պատկե-րազարդ սենեակս, հեգնում էր իմ գրական աշխատանքը, ափսոսում սպիտակ ու կոյս թղթերի անմեղութիւնը, որ խախաւում էր յանդուզն գրչիս սև ու սուր ծայրի տակ և

—Ախչի նունուշ, դու հօրքս ամման օր ըզտեղ գեալիս:

—Հնչց ա թա հօրքմ կեամ, սող Գարքանդու կնանիքը հօրն կեամ ես էլ ընհենց. հեաքիմը ինձ ճարս տայ, վէր խոխա ինի:

—Ընվէ, ախչի, ճարս խոխա կի՞նի, լնա տինինք թա իլաւ ճարս արշա եկած խոխան հինչ սօնկ կինի:

—Պա վէր ի՞նիլ չի, խէ Տուտուցինց Թամարին իլաւ:

—Թամարը հինգ տարւան պսակած ար, ընտուր իլաւ քու պսակելիլ՝ հեսա քսան տարի կինի:

—Իէ հինչ գիտամ, հեաքիմը ասալ ա, վէր իրէք ամիս ես ճար տամ, իրէք ամիս կիսլալօգի թթօ ջրան խմիս, իրէք ամիս էլ Ղազան քինիս. էդ իննը ամսւմը իննը ըմսէկան մին խոխա կինի,

Դայի Աստուծ իմ մին ջարքմաղար տգաս պահի թա սօտ ասիմ, հեսայ դիւզ իցցունը չօրք տըրեկան մարթըմ մագէրանան մուրօքս չալիըն տաս. վէննիս մինը էս դիւնիւնն ա մինը էն դիւնիւմը թորթա ըտի պէնէր հեալս լսած ինի. աթուն երիսին օլուլ, բարբաղ ինիս օլքա վէր հինչ վէր լսալ չընք՝ լըսմընք, տեսալ չընք՝ տեսնըմընք. լաւըն ասալ թա վէր մարթիս մաշգիւսի շհարը դիրդակվըմա, բէյինը դիրմանալ լըցնըվըմա:

Հեալեալիկա էսքանը մնընընեարգ քցիք վէչ չիւնքի էնլա իննականա:

Գամֆէօ Պօզս

Ա.—Անպիտան զրամաշորթը ինչպէս էր համարձակում իր գարշիլի արարքը կապել իմ թերթի հետ:

Բ.—Համաձայն եմ. զրամաշորթութիւն կատարելը աւելի քիչ յանդգնութիւն է, քան զրամաշորթը կարող է իր անունը թերթի հետ կապել:

պնդում էր թէ՛ առանց սիրասուն ընկերուհու ախորժիկի ներկայութեան, կարող է ապրել ոչ այլ ոք, եթէ ոչ ստտանան:

—Զգաստացիր երիտասարդ—ասում էր նա քըթախտը քաշելով—ապրել այդպէս... որբի նման... մի՞թէ կարելի է...

* * *

Վերջապէս այդ գրողը տարած պատաւ դէղիի սեթեթներինց յեղափոխելով, կարճ ժամանակից յետոյ, ես նշանեցի հարևանուհի Նատօի աղջիկ՝ Կատօի հետ. ի՞նչ աղջիկ, ուղղակի մի գոմէշ. ման գալիս հաստ ու կարճ ոտերի թփթփոցից ուզում էր յատակը փչէք, աթոռներս էլ եթէ լեզու ունենային անշուշտ այն գրողամազ դէղիին գանգատ կըզնային: Ինչկիցէ: Այդ աղջկայ հետ միտամասնակ սիլի-քիլիներով ու համով ապրելուց յետոյ տեսայ որ—օհօ, սա ուրիշ պտուղ է, ի՞նչ բողկեր ասես ուտում է—էլ այրի տէրտէր սիրել, հետը լուսանկարել, «կարմիր սենեակ» յաճախել...

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

—Ս. Զէրքէգեանը Օրմանեանի մասին մի լուրջ հինգ վեց տողից բաղկացած յօդւած է գրում:

—Գ. Սաժակը ճառեր է պատրաստում, որ կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, պատգամաւորական ժողովներում արտասանի:

—Հ. Առաքելեանը խիստ յոռետես կարծիք ունի ընտրութիւնների մասին:

—Գ. Ենդերարեանը սոցիալական, մարքսիստական և հայկական տեսակէտներով կարելի է համարում ընտրութիւնը:

ԹՈՒՏՐՈՆ ԵՒ ԳԵՂԱՐԻԵՍ

Ժողովրդական տուն

Նու, եղբայր, Թիֆլիսում այնքան յօրելաններ աւին, որ նրանցից մէկին ես էլ եկայ հասոյ:

Ժողովրդական տան հայկական սեկցիան էր աւողը:

Լաւ տղերք են, ես ու իմ արեկ, դուրըր ցուրտ, անձրեկ, ցեխ՝ շունը տէրը չի ճանաչում, զբանք վերցրել ու յօրելեանական ներկայացում են կազմակերպում:

Նախանձի էին ընկել.—էտ ինչո՞ւ Հաւաւըրը իր հալովը, յօրելեանական հանդէս կատարէ, իսկ իրանք ոչ.—ասացին ու դուշմանի աչքը հանելով ամուսն Ծիրվանզադէի 30-ամեայ յօրելանի առթիւ աւին մի ներկայացում, խաղալով հեղինակի «Պատիկ համար» զբաման:

Մեզ բոլորիս յայտնի ու ծանօթ էլիզբարովի դերը խաղում էր պ. Սևուսեանը:

Զգիտեմ պ. Սևուսեանը Մոսկւայում ի՞նչ է սովորել, բայց պէտք է հիթաղրել, որ հայերէն իմացածը մոռացել է:

Այլ կերպ, ինքը Սևուսեանն էլ, ազա

չէ, տեսայ որ ես այլ ինչ եմ—եթէ ոչ մի рогаый мужъ, սրան սկսեցի զօրս դու պատուիրեցեր շան քեթակներ ուտեցնել. սա էլ փախաւ մօր տունը. գործը աւեց կօնախտօրիային, որից յետոյ ես դարձայ հասարակական թիւր և յոռի կարծիքների խաղալիքը:

—Այնեկաւոր, անպատկառ... ամենուրեք փսփսում էին հազար ու մի ծանօթ անծանօթներ—ճոռ հովերի հետեոյ, ազատ հայեացքների աէր մի մարդ և կարողանում է դիւրութեամբ իր անմեղ—անպաշտպան կրնօջը ծեծել... XX-րդ դարում, ջրկիր քիւրդըն անգամ չի ծեծում իր կնոջը, իսկ դա... ամօթ... մի՞թէ կարելի է...

* * *

Այդ չար ֆիասկօյից յետոյ, ես թէև մընացի առաջւան պէս իմ դժոխք դարձած եղգմում, սակայն հօգիս զրկւած էր արդէն իրեն յատուկ խաղաղ պարզութիւնից (իսկ աւագակ դէղիին գլուխը անել, կորել էր մեր

Գասպարն էլ ու պ. Շիրվանզադէն էլ կը համաձայնեն, որ ասել չի կարելի:

Էլիզբարովի սիփաթը շինեց իր գրողականացու գարեջուր վաճառողի սիփաթ, քիթը ուս դէնչիկի քիթ. իսկ խօսալը—հաղապաւով բռնածի էր. եւ եթէ աւելացնենք, որ շեշտագրութիւնը բացի հայկականից—чортъ знает—ինչի՞ էր նման—պարզ կը լինի թէ ինչո՞ւ, առաջին կարգում նստած Յով. Արելեանը ատամները կրճատացնում էր, երբ իր սիրած Էլիզբարովին բեմում տեսնում էր չարչարելիս:

Մարգարիտի դերակատարուհին լաւ էր, եթէ... իր ոչնչում մեղք չունեցող կըծքին անդադար բուռնքներ չիջեցնէր... Միթէ ցաւ չէր զգում... Պէտք է որ ցաւ զգար, որովհետեւ նրա սիրահար Օթարեանը սըրտապատառ եղած գլուխը գծւածի պէս թափահարում էր, ձեռքերը շարժում. բայց թէ ինչո՞ւ էր և ոտները գետնին քսում—դա ես չիմացայ... միթէ՞ դա էլ սիրոյ հետ կապ ունի...

Սուրէնը... 3/4 լաւ էր: Բագրատը՝ հալալ ըլի կերածը.—թամամ լաւ էր:

Սաղաթէլը—գետինը մտնի, բացի «տէրողորմիէն» չիկացնելուց՝ Սաղաթէլ լինելուց այնքան էր հեռու, որքան ես Մարկ Տէէնից:

Բօզալիան—շատ լաւ ծիծաղում էր, ու նոյնչափ լաւ էլ մէջքը ծամուս:

Երանուհին—թամամ երանուհի էր:

Ծառաները—համարեա թէ ծառաներ էին: Զմոռանամ յիշել, որ «ազգային» ծափահարութիւնը բոլրով այդ գիշեր խարջում էր: Շիրվանզադէի թամամ զահէն տարան, ով քնից զարթնում էր՝ «կեցցէ» էր գոռում ու ծափահարում... Սեկցիայի վարչութիւնը տեսաւ, որ ծափերով փոք չի կշտանայ, մի քանի հատ ընծայ նւիրեց պ. յօրելեարին և որովհետեւ ուշ գիշեր էր ու սոված կըլինէր

բակից): Այդ օրերին եթէ պատահմամբ վաղ էի տուն դառնում գործից ու նստում իմ պատշգամբում Արցըրաշիկի նոր «սաղմոսները» կարդալու, ամբողջ հարևանութիւնը սկսում էր բամբասել թէ՛ իբր ես սիրահարւած եմ հարևանուհիներին՝ Մրկըթեանի կամ Նազլամիշեանի հետ: Իսկ եթէ օրւան մտաւոր լարումից յոգնած գնում էի Մուշտայիդ մի բանի գաւաթ ցուրտ գարեջուր խմելու կամ փոքր ինչ թարմ օգուն ձեմելու և վերադառնում էի գիշերով, սովորականից ուշ, կարծում էին՝ իբր ես այլ և այլ Даша կամ Малаша-ների այց եմ կղիլ գնացած:

Միթէ դա մարդ է—ասում էին ամենքը—արևի նման կնոջը ձգեց և հիմա հազար ու մի վատ ճանապարհներ է բռնել, ամուսնանալ ա. տաճարում և ապա այդպիսի կեղտոտութիւն... դէ մի՞թէ կարելի է...

* * *

Ուշ, այնուհետև, իմ միօրինակ տաղտոտ

—հրաւիրեցին ընթրիքի: Ժողովուրդը թէև սոված, բայց լաւ տրամադրութեամբ տուն գնաց:

Կլլան Յակովբ

ՍԱՐՏԱՓՈՒՆԻ ԵՐԿՐԱՅՈՒՄԸ ԲԱՆՈՒՄՆԵՐԻՄ

Ամսիս 25-ին, դէպի լոյս 26-ը, ինչպէս ամեն օր, ես իմ հնարած նորածն աւերուողունս եմ փորձում. և այսօրայ իմ փորձը աւելի քան աջող էր. բարձրացել էի մինչև 0,333 միլիմետր, թերևս էլի բարձրանայի եթէ հորիզոնը ինձ չխանգարէր. ցած չէի գալ եթէ անիբաւ սուղիչները ինձ չյիշեցնէին, որ գործի գնալու ժամանակ է: Ժամը ուղիղ 6-ը անց էր 1 րոպէ 2 վայրկեան, երբ ստներս զգացի հողի վրայ. վայրկեանաբար աւերուողունս ծալեցի, մեքենան հաւաքեցի գրպանս դրի ու շտապեցի դէպի գործարան. ճանապարհի անկիւնում նկատում եմ մի խումբ մարդկանց հաւաքւած թւով մօտ 10—12 հոգի, որոնք իրար հետ բարձրածայն խօսում են հետաքրքրութիւնիցս մօտենում եմ, հարց եմ տալիս:

Ի՞նչ կայ, ի՞նչու էք հաւաքւել, ի՞նչ է պատահել... Մի րոպէ համարեա ոչ որ չպատասխանեց ա՛յլ զարմացած նայում էին ինձ. վերջապէս մէկը ընդհատեց լուսթիւնը, դառնալով դէպի ինձ:

—Բա, սնաշէն դու քնած էիր, թէ՛ մեռած, երկրաշարժը չզգացիր...

—Ի՞նչ երկրաշարժ—հարցրի ես, գծել էք ի՞նչ է, երբ է պատահել:

—Երբս որն է, սնաքանդ, բա դու չե՞ս լսել:

Ես հասկացայ որ իմ երկրից բացակայ ժամանակս երկրաշարժ է տեղի ունեցել, որից ի հարկէ ես տեղեկութիւն չէի կարող ունենալ. լաւ ասի.—կարող է պատահել որ ես իմացած չլինեմ, այս խօսքիս վրայ բոլորը հաճուցին: Ես բարեւոք համարեցի լի-

նել այդ ծիծաղելի դրութեան մէջ, քան թէ դադանիքս բաց անել ու ես էլ հետները ծիծաղելով ասի. էլ ծիծաղելու ի՞նչ կայ, քնած մարդն ու մեռածը միևնոյնն է, չեմ իմացել, դէ՛հ դուք ասէք, իմանամ. Ժամի քանիսին էր, և խիստ էր շարժումը:

Ժամի 3 և 30 րոպէին էր... —Չէ՛ ի՞նչ ես ասում հաղիւ 3 և 15 րոպէ...

—Ոչ դու ես ուղիղ, ոչ էլ նա, ես նայել եմ ժամացոյցիս ուղիղ 3 և 23 րոպէն էր...

—Մենք էլ ենք նայել...

—Իմ ժամացոյցս ամենաուղիղ ժամացոյցն է, 15 րոպէի խող եմ տւել այս չուղունին...

—Իմը սրանով վեցերորդ տարին է «Սաթաբալա»-յի լոյս տեսած օրն եմ ասել, դեռ ժամագործի մօտ տարած չկամ...

—Ախպէր, էտ անտէր ժամացոյցը որ մի անգամ տարար ժամագործի մօտ, լաւն էն է ձեռք քաշես, թէ չէ էնպէս կանեն որ ամեն շաբաթ իրանց այցելես, ինչպէս բժիշկները հիւանդներին...

—Ես ժամացոյց-մամացոյց չունեմ, բայց օրուայ որ պահը ասես կարող եմ ճշգրիտ որոշել, 3-ը անց էր 25 րոպէ, մի անգամ գիւղում մեր ակրատէրի հետ...

—Սըղբում եմ, ասի, թողէք այդ խօսակցութիւնը, երկրաշարժը թողել էք, սկսել էք...

—Հա ես հէնց այդ էի ուզում ասել, երեկոյան ուղ քնեցինք, Զիւլփին, Բախշին ու Գիւլբին ինձ մօտ էին եկել...

—Սօսք էլ կարում եմ, բայց ոչինչ, իմ ասածը կարճ է, Գիւլբին նշանեմ է. տեսնեմ ես փուշը ինչպէս սուս ու փուս...

—Ասում են խօսքը խօսք է բաց անում, էք երբ, երկիկ ես բազարում տեսայ, բա ի՞նչու բան չասաց...

—Ես լսել էի, աղջկանն էլ ճանաչում եմ, լաւ աղջիկ է, որը մեծացած, սնտես կըլինի...

Չղային բորբոքումն, թուլացկոտութիւն, անքնութիւն, միզբէյն և այլն, ես երգելով իմ դառն յուսահատութեան ողբերգը, դադարեցի այլևս նոր կեանք կրագիւլուց, իսկ ինձ այց եկող մի քանի գոյգ ծանօթներս—այն ապուշ հոգիները շարունակ մըմնջում էին իմ ականջում.—է՛ ընկեր, անսխալականն Աստուծոն է լուի, հաշուիր կնոջը հետ և մոռացիր անցեալը, ի՞նչ անենք, որ նա հասարակական մոլի հաճոյքների խաղալիք է դարձել արդէն, դու կարող ես նորից ուղղել նրան. լաւ չէ, լաւ չէ բարեկամ... այդ աստիճան քիչալի և յամառ լինել... Մի՛թէ կարելի է...

Մահճիս մէջ, որ դարդարել էի թարմ ծաղիկներով, ես նւագում էի գունասա ու հիւճւած: Ետը՛ս, գլխիկոր, կեղծ կարեկցութեան հայեացքներով կանգնած էին եր-

—Ի սէր Աստծոյ, թողէք կողմնակի խօսակցութիւնը, դոչեցի էս հոգիներս թէ՛նչից ելած:

—Թողնում են, որ խօսեմ... —Մարդ որ խօսում է մէջ են ընկնում չեն թողնում...

—Չարմանալի մարդիկ են... դէ՛հ թողէք...

—Կարդ ու հերթ չկայ, կարծես թէ ժողով լինի:

Այսպէս, սիրելի ընթերցող, մէկը խօսում էր, միւսը ընդհատում, երրորդը սկսում, չորրորդը կտրում, այսպէս մինչև 10-երրորդը, վերջապէս երեկոյան ուղ քնուղը յաղթեց ու սկսեց...

—Հա էն էի ասում. ուղ պաւակեցի, հազիւ աչքերս փակել էի, մէկ էլ յանկարծ «կառուանթա» երեք անգամ կարծես—տասը մարդով ցնցեցին, քիչ մնաց վէր ընկնէի...

—Ո՛րտեղից երեք, հազիւ մէկ, երկու, յետոյ սկսեց օրօրելը. ես այդ ժամանակ արթուն էի, Աղաւնին էլ երկխային էր օրօրում. ես էլ կարծում էի, թէ օրօրոցից է, ասում եմ.—սխչի, կամաց օրօրի, մահճակալս էլ հետն ես օրօրում... ես էլ երեխայ լսօմ չեմ, որ օրօրելով ես քնացնում...

—Երեխադ ի՞նչպէս է անողջացիկ, է...

—Փառք Աստծոյ լաւ է. միտք ունեմ այս ամառ ամառանոց ուղարկել...

—Մեր «նագրադը» որ դուրս գայ ես էլ մերոնց գիւղ եմ դրկելու... մեր գիւղը տաս ամառանոց արժի, համ էլ մարդ արեւէին կըլինի ամառանոցում սիվ է իմանում ի՞նչ, թոկից փախածների հետ կըմանօթանան...

—Բայց երկրաշարժի պատմութիւնը մընաց, նկատեցի ես:

—Հա էն էի ասում.—Քիչ էր մնում վէր ընկնէի. վաղեցի դէպի դուռը, որ բաց անեմ, դուրս դամ, հակառակի նման չեմ կարողանում բաց անել, բանալին շուտ է գալիս մէջը...

—Դուրս ասացիր, բան միտս ընկաւ,

կուսեցի անցնող ցուրտ ու անպատուղ կեանքիս առանձնութեան մէջ, ես ուզեցի մի նոր ընկերուէի գտնել, որպէսզի նա մեղմացնէր հոգուս տարակուսանքը. ուզեցի նորից պիտել, նորից ապրել, յետ բերել յոգնած աչքերիս վաղեմի փայլը... սակայն բաց երկնքի տակ չգտնեց և ոչ մի կանացի սիրտ, որ կարողանար հասկանալ, կարեկցել ու սիրել ինձ...

—Չէ՛—ճշում էին շուրջս—նա սիրել չգիտէ... դարձեալ կըձգէ... սիվ չի ճանաչում նրան... կապուկ նրա հետ—այդ ուղղակի ստակալի է մի՛թէ կարելի է...

Երբ վերջապէս դառն յուսախաբութիւնից յետոյ, խորտակեց դիւրազգաց ու սարսուռն հոգիս և ես ենթարկեցի այն կորըստաբեր ու միևնոյն ժամանակ անուշ հիւանդութիւններին, որոնք կոչում են—

կուսեցի տիպեր, կամ աւելի լաւ է ասել՝ մահի երկու մտերիմ արբանեակները փողեր ուտող բժիշկս ու գլուխ ուտող խոտովանահայրս, որոնք եկել էին լսելու աշխարհից խոտով մեռնող Սկեպտիկի վերջին հոտահանքը, (թէ և փառք Աստծոյ վերջը նրանց սրտով չեղայ և մինչև այսօր էլ ողջ-անողջ եմ):

—Արժէ, միթէ, չնչին բաների համար անողջութիւն քայքայել—ասում էին նրանք:

—Ի՞նչ բան է կինը... ափսոս չե՞ս դու... մարդ թոյլ տայ, իրան մի ինչ որ խեղդատակ կնոջ նենգութեան պատճառով տանջւել, հիւճուել և վերջապէս մեռնել...

Մի՛թէ կարելի է...

Ե՛ւ մի՛թէ կարելի է:

Իսկապէս, մի՛թէ կարելի է:

Մարիկ



—Յոթնեար դրոշմերի համար փող են հաւաքում... Ողորմութիւն արէք, պարոն, եղբաւ համար վարձք է:



ԽԱՆՈՒԹԵՆ ԽԱՆՈՒԹԵՆ



խօսքդ խնդրում եմ չմոռանաս, մի ծիծաղելի դէպք պատմեմ: Էս գիշեր, անուշը չեմ տալ թէ քվ է եղել, միայն դէպքը կը պատմեմ, ձեզ համար միեւնոյն չէ, թէ քվ է եղել. բաւական է, որ պատճեմ եղելութիւնը...

—Ախպէր յու, միևնոյն է, պատմիր, ինչ որ պատմելու ես...

—Այնքան երկարացնում ես, որ մեծ պատ ես շինում...

—Սուքա էլ կտրում ես և տտում ես. որ չմոռանամ. դու քո պատմելիքդ չէիր կտրող չմոռանալ...

—Չարմանալի մարդիկ էք, դէ՛հ թողէք...

—Ի՞նչ կապ ունի քու պատմութիւնը երկրաշարժի հետ...

—Կապ ունի, այն էլ անմիջական...

—Թողէք, ի սէր Քրիստոսի, այս անգամ էլ կտրեցի ես.—Թողէք թող պատմի, միևնոյն հիմա հայոց պատմութիւնն էլ պատմած կըլինէր, ես շտապում եմ:

—Ո՞րտեղ մնացի ես...

—Սկսել էիր որ մնայիր...

—Միք խօսի...

—Ես չեմ խօսում այլ յիշեցնում եմ...

—Մեզ անկող յուշարար հարկաւոր չէ...

—Մեզ հնդուհուր նման շուտ մոռացկոտ պատմիչ հարկաւոր չէ...

—Հնդուհուր ինքդ ես, անա...

—Թողէք իրար անպատուելը, ընդհատեցի ես...

—Ես որ սկզբում ասացի, կարծես ժողով լինի, այժմ հաստատուում է. սա էլ քեզ վերջաբանը...

—Պէտք է խօսքդ յետ վերցնես... ես ինձ անպատուած եմ գտում:

—Չեմ վերցնի, ես օրինակի համար եմ ասել...

—Ես պահանջում եմ, և կըստիպեմ...

—Ախպէր, էլ լինէ՞ք իրար հետ կուռում, հնդուհուր չէ՞, ես կը վերցնեմ, ճաշին կըխորովեմ, ձեզ էլ համեցէք կանեմ. բայց որովհետեւ իմ տանը խոտած մարդի չեմ ընդունում, այստեղ եթէ հաշտեցէք:

—Վէճը սպառւած է... շարունակիր:

—Միրտ թողի՞ք, որ շարունակեմ... ինչ էի ասում... հո՛, էն էի ասում, էդ մարդը, որի անուշը չեմ ուզում տալ, էս գիշեր վախտի է եղել, կինն էլ դէ՛հ ջահէլ «վախկոտ» կին է եղել, «միամտաբար» հրաւիրում է հարեանին իր մօտ քնելու. բայց յանկարծ անսպասելի կերպով մարդը դուռը թակում է: Կինը ինչ անի, ինչ չանի, վերցնում զբան, իրանց ամանեղէնի շկափի մէջ պահում. և պատուիրում է, երբ մարդը քնով անցնի կամացուկ դուրս գայ...

—Եթէ իսկապէս կինը վախենալու պատճառով էր հրաւիրել ի՞նչ կարիք կար թագցնելու:

—Կարծիքներ փոխանակելու ժամանակը չէ:

—Վերջապէս տեսնում եմ, որ չէք թողնում խօսելու, ուստի կարճ եմ կապում. հազիւ էր մարդը տեղա օրեւել է, երկրա-

շարժը սկսեւել է, որի շարժումից շկափը վէր է ընկել, միջի ամանեղէնները, մի քանի տեսակ մուրաբաների և պամիրորի բանքաները կտարեւել են էր մարդի գլխին: Այսպէս ուրիշն գաղտնիքը բացեւել է. կինը ասում է, որ առաջին անգամն է և հրաւիրել է յոկ իր վախենալու պատճառով, իսկ մարդը ասում է՝ որ բռնեւին է առաջի անգամը, որովհետեւ ինչ պակեւել է առաջի անգամն է երկրաշարժ լինում:

Այսպէս, ընթերցող, եթէ դուք դադարաբար կազմեցիք երկրաշարժի մասին, ես էլ բան հասկացայ նրանց պատմածից:

Մոն-սի

ԳՆՆՁՆԵՐ ՓՈՒՏՈՒՄԸ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԳՆՆՈՒՄԻ ԺՈՂՈՎՐ

Մի կիրակի «Кружок»-ի դահլիճում, կայացաւ Գանձակի Փոխադարձ Վարկի Ընկերութեան ընդհանուր ժողովը:

Ընկ. խորհրդի նախագահ պ. Աղաջան Տէր-Սահականը, բանալով ժողովը, առաջարկեց ժողովականներին, ընտրել, իրենց համար նախագահ:

Ժողովականները գաղտնի և բացարձակ քւէարկութեամբ և միաձայն ու բազաձայն ձայներով, ժողովի նախագահ ընտրեցին, Գանձակի գլխին յայտնի Սաթարաւ և բուր խաթարախոտական ժողովների «անփոփոխ» նախագահ «զուտ» 96 պրօրի խաթարաւա, Յովսէփ Ամիրին, որը ընտրողներին, այնպիսի շնորհակալութիւն յայտնեց, որ կասես թէ Չոռնաբաղը իրեն էին ընծայել: Նախագահ Յովսէփ Ամիրն աչքի անցկացնելով, ընկեր. խորհրդի կազմած տեղեկագիրը, յայտնեց ժողովականներին, որ 1909 թ. բանկը, զուտ օգուտ է ունեցել, 1000 ր. և 15 փ. փթած մուրհակներ, իսկ 1910 թ. 4000 ր. և մի քանի անկեակ վարիչներ:—Նա աւելացրեց, որ բանկի կասան, ութի-ուրբաթ օրին մկները ծակել են ու այդ պատճառով վաստակած գումարը բանկում պահելու ուրիշ ոչ մի տեղ չէլայ. խորհրդի անդամները, ճարահատեալ, փողը «փարթ» են արել ծառայողների ոտճիկների վրայ: (Այսինքն ոտճիկներն աւելացրել են ի բաց առեալ «Сторожь» Մհակի և ծառայ Պօղոսի ոտճիկները) ուստի առաջարկում եմ ժողովականներից ոտճիկների աւելացումը առանց ձայն ու ծպտում հանելու վաւերացնել...

Մատթէոսեան.—Ես ցանկանում եմ, Устав-ու ըզօրա ոտճիկների վաւերացումը գաղտնի քւէարկութեամբ կատարել...

Նախագ. Յով. Ամիր.—Ես երկար ժամանակ չունեմ, այստեղ գաղտնիքներով զբաււելու: Այսօր, մի քանի ժողովների էլ պիտի նախագահեմ...

Ար. Տէր-Աւետիքեան.—Պարտններ, եթէ մեր բանկը, այս դառն ու փոթորկալից ժամանակները զոյութիւն է ունեցել, և չէ մեւել, զբանով մենք պարտական ենք մի-

միայն հաշտապահի ետանդունը ջանքերին. ինչպէս որ այլաբի թէ՛ր իրենց իրենց հաշտապահի ջուրը գինի դառնալու պէս) և մուրհակներ «թխելը» Գանձակում, եղել է իմ ջանքերի շնորհիւ ուստի ես, առաջարկում եմ հաշտապահի ոտճիկը մի քիչ էլ աւելացնել...

Մի ումն.—Մինչև այժմ, մենք գիտէինք որ բանկի ծառայողները, Ֆինանսական հարցերի մէջ, հանձարեղ խելքի տէր են եղել, բայց չէինք իմացել, որ նրանք հրաշք գործել էլ գիտեն և մեռելներ էլ են կենդանացնում... Իրօք, եթէ բանկը գոյութիւն է ունեցել, միմիայն հաշտապահի ետանդի շնորհիւ,—անպա կատարելիք,— և միւս, մեծ-մեծ ոտճիկ ստացողները, փախաներ են եղել ու գուր փող ստացել... Եւ, եթէ այդպէս է ինչու, «Сторожь» Մհակը, բանկը աւելու ժամանակ, նրանց էլ հետը չի աւել, ու գուր թափել:

«Сторожь» Միակ.—Մի «քոթուղ» աւել ունեմ, որը հազիւ է բանկի զիբիլները աւում, ես նրանով այդ մեծամեծներին, ինչպէս աւելում չէ, չեմ կարող: Ամեն բանի համար փող կայ, երբ հարցը վերաբերում է բանկի «գորբաներին», և իրենց ոտճիկներին, իսկ երբ, հերթը հասնում է Մհակին, Պօղոսին. և աւելին՝ փող չկայ... Ա՛յ ոչ ու փող լինի...

Նախագահ Յով. Ամիր.—Մհակ ջան, մի ջիգրելի, շուտ կը պատուես:—Գրեւծ է՝ «ով համբերեցէ խպանալ կերիցէ»:

Նախ.—Ոտճիկների աւելացմանը ով համաձայն է, խնդրեմ, կանգնի:

Մի խումը մարդիկ.—Մի մասը կանգնում է, իսկ միւսը լօք է տալիս:

Ղըլեղեան.—Բա, գաղտնի քւէարկութիւնը որտեղ մնաց...

Նախագ.—Սարին էն զօլին մնաց. բացի այդ, ոտճիկների աւելացումը խօ գաղտնի չէ եղել, որ գաղտնի կատարել,—նա թղթի վրայ և բաց գրեւծ է, բաց էլ պէտք է լինի:—Ես, հոգեբանօրէն, պարզ նկատում եմ, որ ժողովականների «настроение»-ն, բացի կողմն է, միայն մի քանի «նարգարաններ» են նամադուլ անում:

Իվանուշկա Մսակեան.—Պ. նախագահ, դուք հարցը տղաւադում էք և գիտամբ ժողովականների տրամադրութիւնը դարձնում այս ու ան կողմը. նախագահը չը պէտք է բոլորից շատ խօսի և արհեստականօրէն «настроение» ստեղծի...

Նախագահ Յով. Ամիր (զայրացած գառնալով ժողովականներին).—Պարտնայք տեսնում էք Իվանուշկան ինձ անպատուում է և անընդունակ նախագահ է համարում:—Նա հէնց իմանում է թէ նախագահութիւնը տոկոսներով փող տալն է, որ ձեռքն ընկածին օխտը պօրտի հետ 88 կապկադոսի... ևս 30 տարւայ ընթացքում 9 միլիօն ժողովների նախագահել եմ, բայց ոչ մի անգամ էլ ա այսպիսի նկատողութեան չեմ կենթարկել... ժողովներում երկար ճառեր եմ ասել մինչև ժողովականներին քննեցելը և վերջը իմ ասածները ոչ ես եմ հասկացել և ոչ լսող-

ները... Լաւ ուսումնասիրած եմ հայ ժողովրդի անբոխային յատկութիւնները մանաւանդ ժողովներում եղած ժամանակ: Մեր տղերանցը դուր գալու համար յաճախ ինձ նրանց առաջ ձեռքերէլ եմ ամենաձայրայիղ արմատական և ընդհակառակը: Ինչպէս մօտոտօն կեանքը, և միատեսակ կերակուրները, մարդկանց ձանձրոյթ են պատճառում, այնպէս էլ միշտ մի սկզբունքով երևան գալը տաղտկալի է թուում... Արարչագործ մայր բնութիւնն էլ նոյնպէս է դասուրեւել եղանակները, մի օր արև մի օր թուրպ, անձրև այլն... Եւ վերջապէս հէնց մեր վարժապետ հրապարակախօսները վերջին տարիներում 500 գոյներ փոխեցին: Հոչակաւոր նախագահ լինելու յայտնի է եղել, ոչ թէ միայն կովկասում, այլև Ռուսաստանում, և հէնց այդ էր պատճառը, որ 78 թ. Բերլինեան Վեհաժողովի ժամանակ, որտեղ քննուում էր, հայկական բարեբաստիկ 61-րդ յօդածը Լօրդ Բիկոնսֆիլդից, հրաւէր էր ստացել, ժողովին նախագահելու, բայց զբաղւած լինելով «զուտ» «ազգային» և «հասարակական» գործերով չկարողացայ գնալ. եթէ գնացել էի, չէի թոյլ տալ, որ եւրոպական նենդ զիւանագէտները, 61-րդ յօդածը, այնպէս խմբազրեն, որ յետոյ նա, իրենց ձեռքում մկրատ լինի, որ «հայերի անունով» իրենք օգտուեն, Արդիւր Համիդին խուզեն: Համիդն էլ նրանց ջիգրու, եամնշ, եամնշ հայերին ջարդ ու փրշուր անի... Վերը թւածները զննելով մեծարելի ժողովականների առաջ, խնդրում եմ Իվանուշկային ասէք, որ խօսքերը յետ կուլ տայ:

Չայներ. — Իվանուշկա, խօսքերդ յետ կուլ տուր, կուլ տուր, կուլ տուր...

Իրանուշկա.—Տոկոսներ է, ինչ է, որ կուլ տամ... կուլ չեմ տալիս...

Այնպիսի հարայ-հրոց է բարձրանում, որ փողոցով անցնողները կարծում են թէ, Բահադի քրմերն են, ու գոռում գոչումով իրենց կորած Բահադին են որոնում:

Յով. Ամին նրանց հանգստացնելու համար զանգահարում է... բայց լսող չկայ... (Կըշարունակի)

Զիպօ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

40 օր! ՉԲԻ!

Եթէ դուք 40 օրայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարդալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկկամ են),

ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՉԵՆՈՒՄ
Մի ձեռնարկի գինը ճանապարհածախսով վերագիր վճարով արժէ 1 ր. 10 կոպ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ.:

Պատւէրները կատարում է միակ պահասոր ամբողջ Ռուսաստանի համար—С. Петербургъ, Петербургск. сторона Большой пр. № 56—609, Я. К. Петерсь. 482 00—5

(Կ. Տ. 2.)

Ի Ե Ս Տ Ո Ր Ե Ն - Ճ Ե Շ Ե Ր Ե Ն

„ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՅՏ ԹԱՐՍ ՄԹԵՐՔԻՅ


— Եւրոպական և ստիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընաիր բմպեղիններ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—7



Первокл. ресторакъ „АННОНА“



„Здание Архитемического Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвйиць—г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; биліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„АННОНА“

25—7



ԲՈՂՈՐՈՎԻՆ

Ի-ԻՆ Խ Ո Ն Ս Ր Ա Ր Ա Կ Ա Ն Կ Ո Ւ Ր Ս Ե Ր

!! ՉԿԱՆ ԱՅԼԵԻՍ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ !!

Եթէ Դուք հիւանդ էք սֆիլիսով, արիպէրով, շանկերով, սեռական թուրութեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայքայած է ծանախանութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան գաղտնի հիւանդութիւնների տղամարդու, կանանց միզասեռական օրգանների», նկարներով և բազմաթիւ բէցէպտներով մօտ 250 երես: Գինը ճանապարհածախսով ու վերագիր վճարով 1 ր. 30 կոպ.: «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամեն տեսակ հիւանդութիւնների բժշկելու համար, բացի գաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերագիր վճարով 1 ր. 40 կոպ.: Երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաներով): Միակ պահասոր С.-Петербургъ, Петербург. сторона, Большой просп. № 56—609 Я. К. Петерсу 484 (Կ. Տ. 2.) 0—5

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍ-ԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ԾԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 բէցէպտ կերակուրների, խմիչքների, թիւածքների, կոմպօսի, մուրաբանների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն: 300 երես խիտ տպագրած, գինը ճանապարհածախսով վերագիր վճարով 2 ր 60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել անային անտեսութիւնը և պատրաստել անային համեղ ու անդարար ճաշ, միւր կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելածով, մօտ 100 երես, նկարներով: Գինը 1 ու. 20 կ., երկու գիրքը միասին 3 ու. 35 կ. (կարելի է մարկաներով). պահանջներով գիմել բացառապէս Я. К. Петерсу, С.-Петербургъ, Петербургск. сторона, Большой просп. №56—609, 483 0—5

(Կ. Տ. 2.)



ՕՐՄԱՆԻՐ



Սեդր. Մանդիկնան.—Գարձններ, պահանջում եմ այդ «շիղա-փլաւից» ինձ էլ բաժին տաք, եթէ ոչ՝
նօ գիտէք բնաւորութիւնս, այնպիսի բաներ կերպեմ որ...